«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձ նահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Ռիտա Մկրտչյան Ժորայի

Մանկապարտեզ՝ ՀՀ Սյունիքի մարզ «Սիսիան Հ. թիվ 4 ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ.....6

1. Ամանոր,Նոր տարի.....7
2. Տեառնընդառաջ.....10
3. Ծաղկազարդ.....12
4. Սուրբ Զատիկ.....14
5. Վարդավառ 17

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ և ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 21
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 28
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 29
ՆԿԱՐՆԵՐ.....30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի զանգացումը սկսվում է մանկությունից, և այն ամենը ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, իրեն ուղեկից է լինում ողջ կյանքի ընթացքում: Մեծահասակները ուղղորդում են երեխաներին ճանաչել աշխարհը, սոցիալիզացվել և ձևավորել նոր հմտություններ: Երեխաներին լիարժեք օգնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ճանաչել երեխային և նրա ներքի աշխարհը. տարբեր են մարդիկ, տարբեր են նաև երեխաները: Երեխաները ճանաչում, ընկալում և յուրացնում են աշխարհը ընդօրինակելով: Դաստիարակության և սոցիալիզացիայի ճանապարհին կարևոր են ազգային տոների և ծեսերի կազմակերպումը երեխաների հետ: Յուրաքանչյուր երեխայի մեջ պետք է սերմանվի սեր հայրենիքի և սեփական ազգի նկատմամբ: Ազգային տոներն ու ծեսերը կարևոր նշանակություն ունեն կրթական գործընթացում. նրանք կազմում են ներկա գոյության հիմքը և զարգացման առհավատչյան: Մանկավարժների առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավարումն ու զարգացումն է: Ազգային արժեքներից թերևս ամենակարևորներից են ազգային տոներն ու ծեսերը: Հայ ժողովուրդն ունի հարուստ մշակութային անցյալ, ինչը վերահաստատում է հարուստ տոնացույցը՝ հասարակական, ընտանեկան, խմբային, անհատական կյանքը կարգավորող և ստեղծագործական մեծ լիցք ունեցող ազգային տոները: Այն տոները, որոնք հայ ժողովուրդը նշում էր հարյուր տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայ ժողովրդական տոների ծիսական բացահայտումն ու վերլուծությունը շերտ առ շերտ ցույց է տալիս ժողովրդի անցած պատմական ուղին, մարդկանց միջև հարաբերությունների կաղապարները, մարդկանց և անհատների վերաբերմունքը շրջապատի հանդեպ, ակնկալիքները բնությունից և երկնային ուժերից և այլն:

Քրիստոնեության ընդունումից հետո հայ ժողովրդի ավանդական տոնացույցը փոփոխության ենթարկվեց և գոյատևեց ավելի քան մեկուկես հազարամյակ: Այդ երկար ու ձիգ տարիների ընթացքում թե՛ եկեղեցին, թե՛ ժողովուրդը նշել են Սուրբ Ծնունդ, Տեառնընդառաջ, Ս.Սարգիս, Բարեկենդան, Ս. Զատիկ կամ Ս. Հարություն, Համբարձում, Խաղողօրհնեք կամ Վերափոխում, Ս. Խաչի տոները, Կանաչ-Կարմիր կիրակիները, Վարդավառը և այլն: Ժողովրդական տոները հաճախ դարձել են

եկեղեցական և ընդունվել եկեղեցու կողմից, եկեղեցական-քրիստոնեականն էլ իր հերթին է դուրս եկել եկեղեցու պատերից և դարձել ժողովրդի առօրիայի անբաժանելի մաս: Անշուշտ՝ տոների ժամանակ կատարվող ժողովրդական շատ ծեսեր ոչ միայն եկեղեցու կողմից չեն ընդունվում, այլև հակասում են քրիստոնեության տրամաբանությանը: Սակայն դերերի ընթացում հոգևորականները հաշտվել են դրանց գոյության հետ և երբեմն նույնիսկ մասնակցել դրանց: Անխուսափելի է հայկական տոնացույցի վաղընջական շերտի՝ հեթանոսական շրջանի տոնակատարությունների ներգործությունը քրիստոնեական տոնացույցի հետ, որը այնուամենայնիվ մեծ հնարավարություն է ընձեռում ուսումնասիրելու, վերլուծելու և թափանցելու մեր մշակույթի վաղընջական շերտեր:

Եկեղեցական օրացույցի համաձայն, տարվա օրերը բաժանվում են երեք խմբի՝ Տերունի տոներ, Սրբոց օրեր և Պահոց օրեր: Տոներն իրենց հերթին բաժանվում են խմբերի՝ Տերունի տոներ, Աստվածածնի տոներ, Խաչի տոներ, Եկեղեցական տոներ և ազգային կամ կրոնական գաղափարներին նվիրված տոներ: Յուրաքանչյուր տոն ունի իր առնձնահատկությունը և կարևոր է նշել այն հանգամանքը, որ տոնական կյանքում երևույթներից և ոչ մեկը ինքնանպատակ չեն: Տոներում կարևոր տեղ ունի սերը, երգերը, պարերը, ուտեստները, խնջույքները և այլն: Հարկ եմ համարում նշել նաև, որ հայ ժողովուրդն ունի շարժական և անշարժ տոներ: Անշարժ են այն տոները, որոնք նշում են պարբերաբար միշտ նույն օրը, իսկ շարժական տոները ամեն տարի փոփոխվում են:

Հետազատական աշխատանքի վերնագիրն է՝ **<<Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>**: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտական աշխատանքի **նպատակն** է խորքային կերպով ուսումնասիրել հայ ազգային տոներն ու ծեսերը, և առավել արդյունավետ կերպով կրառել կրթական գործընթացում: Անհրաժեշտ է տոնակատարությունների և հանդեսների միջոցով զարգացնել երեխաների գեղարվեստախոսքային մշակույթը, ստեղծել առարկայական միջավայր տոնակատարությունները կազմակերպելու համար: Բացահայտել ազգային տոների ու ծեսերի նշանակությունը նախապրոցական տարիքի երեխաների

կրթադաստիարակչական գործընթացում, դրանց պահպանման և հանրակրթության մաս դարձնելու դրական կողմերը, ինչպես նաև ուսումնասիրել տոներին և ծիսակարգերին նվիրված տեսական գրականությունը, ներդնել մանկավարժական փորձս ի նպաստ երեխաների, առաջադրել նախադպրոցական տարիքի երեխաների պատկերացումները ազգային մշակույթի, օրացույցային տոների, տոնակատարությունների, ծեսերի, ավանդույթների, արվեստի և արհեստների վերաբերյալ խնդիրների լուծման մանկավարժական առանձնահատկությունները:

Մեր առջև դրված նպատակներից բխում են հետևյալ **խնդիրները՝**

1. Նկարագրել ազգային տոներն ու ծեսերը,
2. Խմբասենյակներում, պարապմունքներին երեխաներին ծանոթացնել ազգային մշակութային ակունքներին,
3. Իրականացնել ծնող-երեխա-եկեղեցի կապը՝ ծնողներին ևս ուսումնական գործընթացում ներգրավվելու համար,
4. Հարմարեցնել պայմանները երեխաների մեջ հետաքրքրություն և սեր առաջացնելու համար դեպի ազգային մշակույթ, սովորություններ, ավանդույթներ, ծեսեր, տոներ, խաղեր, ասիկներ և այլն:

Թեմայի **արդիականությունը** կայանում է ազգապահպանման մեջ. ազգային տոներն ու ծեսերը մշակույթի կարևորագույն տարրերն են, որոնք էլ հիմք են հանդիսանում ազգային արժեքների պահպանման գործում: Ժամանակների փոփոխությունը, ուրբանիզացիան մարդկանց հեռվացրել են ծիսական առօրյայից և ազգային տոներն ու ծեսերը հաճախ դուրս են գալիս գործածությունից: Աշխատանքի վերջնարդյունքի համար նախատեսում եմ հետևյալը.

1. Երեխաները կծանոթանան ազգային տոների ու ծեսերին, դրանց անցկացմանը և ծիսական առօրյային,
2. Կսովորեն տոնական խաղեր ու երգեր,
3. Պատկերացում կկազմեն ծիսական միջավայրին և տարածաշրջանային առանձնահատկություններին,
4. Արդյունքում կվերականգնենք տոնի ծիսակարգը:

ԳԼՈՒԽ 1

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Ազգային տոներն ու ծեսերը մշակույթի այն տարրերն են, որոնք առավել կարևոր է ազգային արժեքների պահպանման հարցում: Ժողովուրդներն իրենց զարգացման ընթացքում ստեղծել են մշակութային առանձնահատկություններ, որոնք դրսևորվել են իրենց տոների ընթացքում՝ ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի և այլնի միջոցով: Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի առանց ազգային տոների և ծիսակարգի: Ծեսը ավանդաբար կամ սահմանված կրոնական արարողություն է , որին ժողովուրդը վարագրում է խորհրդավոր հատկություններ: Ազգային տոներն ու ծեսերը աչքի են ընկնում իրնեց պատմական ու ճանաչողական արժեքներով: Հայոց տոները շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը համարյա միշտ համապատասխանել են տվյալ տոնի իմաստին: Նոր տարվա երգերում հնչել են ընտանիքի բարեկեցության ու անհատի երջանկության մաղթանքներ, Տյառնընդառաջի, Բարեկանդանի տոնին՝ հասարակական բարեկեցության, սիրային, չարխափան-հմայական երգերն էին շատ, Զատկի տոնից մինչև Վարդավառ՝ դաշտերի առատության, մարագների լիության, զույգերի երջանկության, սերնդաճի մաղթանքները, Վարդավառին՝ կատակերգերը, սիրային պչրանքը, ծաղրը և այլն: Ընտանիքներին ցորեն, գարի, հաց, յուղ, մեղր, շատ անասուններ, ոսկի ու արծաթ մաղթելով երգերում թեման շարունակվում էր իղձերին հասնելու ցանկությամբ, սոցիալական դիրքի բարձրության մաղթանքներով[1]: Տոնի, տոնական հանդիսության անքակտելի մաս են կազմում խաղերը: Տոների ժամանակ կատարվող խաղերն ունեցել են մի շարք պայմանավորող գործոններ, նախ համապատասխանել են տոնի բովանդակությանը, օրինակ՝ Զատկի ձվախաղերը, Համբարձման և Վարդավառի ճլոթին ու ճոճախաղերը, Բարեկանդանի մրցախաղերը և այլն, երկրորդ՝ սեզոնին, երրորդ՝ տոնակատարության անցկացման վայրին՝ գյուղ, տուն, բակ, չորրորդ՝ խաղացողների սեռատարիքային կազմին՝ մանկական, երիտասարդական, կանացի և այլն: Բոլոր դեպքերում խաղերը պահանջում էին մտքի և մարմնի ճկունություն,

[1] Հայ ժողովրդական տոներ Հ. Խառատյան-Առաքելյան, Երևան 2005թ., էջ 18

սրամտություն և այլն[2]: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում (մասնավորապես Գեղարքունիքի մարզ), մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նվիրված հանդիսություններ: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում ձևափոխությունների ենթարկվելով մինչև այսօր հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը: Երեխաների աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող:

1.1 Ամանոր, Նոր տարի

Նոր տարին դարեր շարունակ ամենասիրված և տարածված տոներից է եղել հայոց տոնածիսական համալիրում: Հայկական տոմարի զարգացման ընթացքում տարեսկիզբ էր համարվում Նավասարդի 1-ը: Այն նշվում էր որպես բերքահավաքի «Նորոց պտղոց և հունձքի տոն»: Ըստ ավանդության, այդ օրն է տեղի ունեցել Հայկ նահապետի մենամարտը Բելի դեմ: XVII դարի կեսերից աստիճանաբար հայ իրականություն սկսեց մուտք գործել քրիստոնեական Ամանորը, որը նշվում էր հունվարի 1-ին: Տոնի անունները հայոց մեջ տարբեր էին՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին

[2] Հայ ժողովրդական տոներ, Հ. Խառատյան-Առաքելյան, 2005թ., էջ 16

Գլուխ, Նոր տարի , Կաղանդ, Կաղինդ: Նոր տարվան նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Իզվլիկ, Գոտեկախ անուններով: Նոր տարվա տոնական խնջույքն սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Շատ տեղերում այդ օրն այցելություններ չէին լինում, սակայն այդ օրը ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր:

Ամանորյա ծեսերից բավական տարածված էր Նոր Տարվա կամ Կաղանդի նախորդ երեկոյան կամ գիշերը երեխաներից կազմված խմբերով տնետուն ման գալու, երգերի և խաղիկների միջոցով տան անդամների Նոր Տարին շնորհավորելու ու փոխարենը նվերներ ստանալու սովորույթը: Երեխաները երդիկներից և բուխարիկներից շնորհավորական բարեմաղթանքներ հղելով, միաժամանակ տոպրակ, կողով, գուլպա կամ այլ հարմարանքներ էին կախում, որոնց մեջ տանտիրուհիները նվերներ էին դնում (սովորաբար չիր, չամիչ, գաթա և այլն): Երբեմն տանտիկինը երդիկից իջեցրած կողովի մեջ կատակով կոշիկ կամ կատու էր տեղադրում, որն էլ ավելի զվարճալի էր դարձնում տոնական ուրախ մթնոլորտը: Այս գեղեցիկ ծեսը հայտնի է «Կախու», «Կախուկ», «Գուռեկլսխ» անուններով: Նոր Տարին ընտանեկան տոն էր, որը խորհրդանշում էր ընտանիքի ամրությունը, նրա անդամների փոխադարձ հարգանքը, հարգալից վերաբերմունքը տարեցների նկատմամբ: Ընտանեկան տոն էր նաև այն առումով, որ գլխավորապես նշում էին տանը' ընտանեկան հարկի տակ: Պատարագի արարողությունից հետո եկեղեցուց վերադառնալով, ընտանիքի հայրն առաջինն իր զավակներից էր աջհամբույրով ընդունում Ամանորի շնորհավորանքները: Երեխաներն ու հարսներն ավագության կարգով մոտենում էին գերդաստանի նահապետին, համբուրում նրա աջը և մաղթում ամենայն բարիք: Առաջին շնորհավորողը նահապետից ստանում էր ամանորյա անդրանիկ նվերը[3]: Առավոտյան օջախի դուռն առաջինը բացում էր ընտանիքի մեծը, որ «ա յն շատ տարիներ անպակաս լիներ տնեցիների գլխից»: Ամանորի ուտեստն աչքի էր ընկնում հարուստ տեսականիով: Թարմ և չորացված պտուղներն ու ընկուզեղենը պատրաստվում և պահվում էին նախապես: Կերակուրների մի մասը եփվում էր դեկտեմբերի 30-31- ին: Պարտադիր ուտեստներից էին անուշապուրն ու հարիսան: Ամենատարածված խմորեղենը «տարին» կամ «տարեհացն» էր, որը ցորենի ալյուրով և ջրով կամ կաթով շաղախված մեծ հաց էր և երեսի կողմից ուներ բաժանման գծեր: Այն

[3] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010թ., էջ 16

բաժանում էին կամ 12 մասի (ըստ տարվա ամիսների) կամ էլ ընտանիքի անդամների թվին հավասար մասերի, որի մեջ դրվում էր արծաթե դրամ, հուլունք կամ որևէ այլ նշան: Սովորաբար, այն կտրում էին Նոր Տարվա օրը կամ նախորդ երեկոյան, ինչպես նաև Ծննդյան տնօրհնեքին: Բախտավոր էր համարվում նա, ում բաժին էր ընկնում խորհրդավոր այդ նշանը: Դանակը դրամին կպչելը՝ դժբախտության կամ չարի խորհրդանշան էր: Ամանորի սեղանի պարտադիր խմորեղեններից էր նաև գաթան: Թխում էին կլոր, ձվաձև, եռանկյունի, քառակուսի գաթաներ: Դրանց վրա երբեմն հատուկ փոսիկներ էին անում, որոնց մեջ երեխաները թռչունների համար ցորենի հատիկներ էին լցնում և դնում տանիքներին: Նոր Տարվա կապակցությամբ պատրաստում էին տարբեր ձևի թխվածքներ քսակների, հյուսքերի, կովի կրծքերի, կենդանու սմբակների, ցորենի հորերի և այլ պատկերներով հավատալով, որ դրանք կնպաստեն հարստանալուն, աղջիկների մազերի երկարելուն, կովերի կաթի և ցորենի առատությանը[4]:

Ստորև ներկայացնում ենք մարդկանց, ինչպես նաև կենդանիներին ուղղված ամանորյա Երգերից և մաղթանքներից առանձին օրինակներ, որոնք տարածված էին հայոց կենցաղում.

/ Նոր Նախիջևան (քաղաք) /

Կալանդոս, դոս, դոս,

կալանդոսը էկիլ է,

դուռին տակը կայնիլ է,

շապիկ հագիլ է,

կարմիր գոտի կապիլ է,

մէկ աւուճին խայիլ է[5]:

Մանկապարտեզում Ամանորյա տոնակատարությունը հատուկ տեղ է գրավում տոների շարքում: Այն երեխաների ամենասիրված տոներից մեկն է: Երեխաները մեծ

[4] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010թ., էջ 16

[5] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010թ., էջ 28

ոգևորությամբ են պատրաստվում տոնին, բոլոր երգերը, պարերը սիրով են կատարում և մեծ ոգևորությամբ: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են թեմատիկ զարդարանքներ, բացիկներ, որոնցով զարդարում ենք դահլիճը, նամակ ենք գրում Ձմեռ պապիկին: Պատրաստում են բամբակյա ձնագնդիներ, որոնցով հաճույքով խաղում են միջոցառման շրջանակներում: Մեծ շուքով և ոգևորվածությամբ դիմավորում ենք Ձմեռ պապիկին և Ձյունանուշիկին, ովքեր նվեր են տալիս երեխաներին:

1.2 Տեառնընդառաջ

Տեառնընդառաջը Հայ Առաքելական եկեղեցու տերունական, անշարժ տոներից է, որը նշվում է փետրվարի 14-ին, Սուրբ Օննդից քառասուն օր հետո: Տոնի Տեառնընդառաջ անունը ստուգաբանվում է քրիստոնեական ավանդությամբ: Համաձայն նախնյաց օրենքի՝ ծննդաբերած կինը քառասուն օրական զավակին պիտի տաներ տաճար, Աստծուն նվեր մատուցեր և աղոթեր: Մարիամը քառասուն օրական Հիսուս մանուկին տանում է տաճար: Այստեղ էր Սիմեոն անունով արդար ու բարեպաշտ ծերունին, որն Աստծուց խնդրում էր իր կյանքը երկարացնել այնքան, մինչև տեսնի աշխարհի ու մարդկության Փրկչին: Նա հրաշքով զգում է Փրկչի ներկայությունը և ընդառաջ է ելնում Հիսուս մանուկին (այտեղից էլ՝ «Ելանել ընդ առաջ Տեսան» արտահայտությունն է): Տեառնընդառաջը հայոց կենցաղում հայտնի է տարբեր անվանումներով՝ Տերընդեզ, Տրընդեզ, Տերընուռաս, Տանդառեջ, Դառդառանջ, Դռնուռառունչ, Դռդռռաջ, Դռռոնջ, Դառանջ, Տռռոնջ-տռռոնջ, Տառինջ-տա ռինջ, Տնդալեշ, Մելետ, Մելեմետ-Տերընտաս և այլն: Ավանդական կենցաղում առավել տարածված էր Տրընդեզ անվանաձևը: Համաձայն հայագիտության մեջ եղած տեսակետների՝ տոնը ծագմամբ շատ ավելի հին է: Այն իր նախնական հենքով որոշակի աղերսներ է ունեցել այնպիսի հին աստվածների պաշտամունքի հետ, ինչպիսիք են երազների մեկնիչ և դպրության ու արվեստի պաշտպան Տիրը և հատկապես Վահագնը կրակի և արևի աստվածը: Համաժողովրդական այս տոնն ուներ համընդհանուր արարողակարգ և կատարվում էր փետրվարի 13 -14-ին: Կենցաղում տոնի ամենատարածված բաղադրիչը ծիսական խարույկի հետ կապված արարողությունն

էր, որը սկսվում էր փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո[6]: Հիմնականում երիտասարդներին էր վերապահվում՝ եկեղեցու բակում կիտված խարույկն առաջինը վառելու իրավունքը: Սովորութային օրենքով այդ իրավունքը, նախ տրվում էր նոր ամուսնացածներին և նշանվածներին, նրանք միայն քահանայից հետո կարող էին մոտենալ սրբազան կրակին և եկեղեցուց բերված մոմերով վառել երդիկների վրա կամ բակերում նախապես պատրաստված դեզերը: Բազմազան էին Տրընդեզի խարույկի շուրջը տեղի ունեցող ծեսերը, որոնք գուշակությունների ողջ համալիրով արտահայտում էին երիտասարդության, սիրո, ամուսնության, սերնդաճի և նմանատիպ այլ գաղափարներ: Վառված խարույկի շուրջը պտտվում և նրա վրայով ցատկում էին բոլորը, սակայն այս պարագայում ևս առաջնությունը տրվում էր նորապսակներին: Վերջիններիս ուղեկցելու իրավունքը վերապահված էր որոշակի պատվավոր անձանց (քավոր, քավորկին, խաչեղբայր և այլն): Քավորը, սովորաբար, բռնում էր փեսացուի ձեռքը, վերջինս էլ իր հարսնացուի և միասին երեք կամ յոթ անգամ պտտվում էին բոցավառ դեզի շուրջը ու հետո՝ կրկին անգամ ցատկում կրակի վրայով: Շատ դեպքերում փեսան հարսանեկան նարոտով, իսկ հարսը՝ հարսանեկան գեղեցիկ քողով, սպասում էին քահանային, որպեսզի նա սրբազան այդ կրակի մոտ կատարի կրկնաւզսակի արարողությունը և որից հետո սկսվում էր տոնական խրախճանքը: Գրեթե ամենուր ցորենից, գարուց, կորեկից, ոսպից ու սիսեռից աղանձ (խեծաղ) էին պատրաստում: Տրընդեզին տարածված էր նաև օժիտ տանելու սովորույթը, հատկապես նոր ամուսնացած հարսի օժիտը, որի տեսականին շատ համեստ էր և սովորաբար ձեռագործ իրեր էին (թևաշոր, թաշկինակ, գլխաշոր, գլխարկ և այլն): Խարույկի մոխիրը թափում էին տան չորս անկյուններում, որպեսզի օջախը «բարաքյաթով» լինի, թուխսի տակն էին լցնում, որ ճտերն անվնաս դուրս գան: Հայոց կենցաղում մինչև 20-րդ դ. 30-ական թթ. գրեթե ամբողջությամբ պահպանվել էր Տրընդեզի ավանդական ծիսահամալիրը տոնածիսական ուտեստը (աղանձ-խեծաղ, հալվա, չիր և այլն), նորապսակների կապակցությամբ ազգականների փոխայցելություններն ու նվիրատվությունները, բաժինքի կամ օժիտի ավանդույթը և հատկապես՝ ծիսական խարույկի հետ կապված արարողությունները,

[6] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010թ., էջ 45

գուշակությունները, որոնց միջոցով ակնկալվում էր սպասվող բերքի առատություն, անձնական երջանկություն և բոլոր տեսակի հիվանդություններից ձերբազատում[7]:

Մեր մանկապարտեզում պարտադիր նշում ենք նաև Տեառնընդառաջի տոնը: Մանկապարտեզի բակում կրակ ենք վառում և շուրջը պտտվելով երգում ենք ծիսական երգեր: Դաստիարակների օգնությամբ երեխաները ցատկում են կրակի վրայով, տարբեր հատիկային կուլտուրաներից բաղկացած հատիկեղենը սփռում են շուրջը, իբրև առատության խորհրդանիշ: Իմ առաջարկով ծնողները ևս ներգրավվեցին, նրանք մեծ սիրով բերեցին իրենց պատրաստած աղանձը, գաթան,հալվան, փոխինձը և այլ քաղցրավենիքներ:

1.3 Ծաղկազարդ

Ծաղկազարդը (ծառզարդար,ծառկոտրուկ) գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն է: Կատարվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի <<Երուսաղեմ մտնելու օրվա>>: Տոնի գլխավոր բաղադրիչը սրբազան ոստի (ձիթենու և հատկապես' ուռենու) հետ կապված ծիսաշարն է: Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, հնում նաև արմավենու ճյուղերով և ձիթենու ոստերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ: Անցյալում ձիթենին և արմավենին համարվում էին խաղաղության ու փառքի խորհրդանիշներ: Ձիթենու պսակով էին Հունաստանում զարդաթել օլիմպիական հերոսներին, իսկ արմավենին' ձոնել արեգակին: Հայոց ավանդական կենցաղում նմանատիպ հատկություններ էին վերագրվել մասնավորապես սոսիներին և ուռենիներին: Օրհնված ոստերի և ճյուղերի մեջ ժողովուրդը տեսնում էր խորհրդավոր ուժ, որն ուներ առատ բերք ու բարիք շնորհելու հմայական զորություն: Այդ ճյուղերը եկեղեցում օրհնելու էին տանում մեծ մասամբ երիտասարդները (գլխավորապես' նորապսակները): Եկեղեցիներում տեղադրում էին ուռենու մեծ ճյուղեր, որոնց վրա մոմեր էին ամրացնում, և դրանց օրհնության արարողության ավարտից հետո, նախօրոք' մոմերը հանգցնելով, սրբազան ճյուղերը կտրատում և բաժանում էին

[7] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010թ., էջ 49

միմյանց միջև: Արարողության ավարտից հետո, գեղանի ոստերով վերադառնում էին տները: Հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար, զանգերի ղողանջների ուղեկցությամբ, եկեղեցի էին գնում բոլորը՝ մեծ ու փոքր, կին թե տղամարդ: Հատկապես, դա կանանց և աղջիկների տոնն էր, որոնք աշխատում էին էլ ավելի գեղեցկանալ: Մեղրիում, օրինակ, այն մասնավորապես աղջիկների ամենասիրելի տոնն էր, որը հայտնի էր Հրռոխնեք (Ուռիների օրհնեք) անվամբ[8]: Ենթադրվում է, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում տոնը եղել է ջրի և անձրևի աստվածուհի Նարին: Նարը պտղաբեր անձրևներ էր ուղարկում երկիր: Երաշտի ժամանակ մարդիկ տիկնիկների և ծիսական երգերի ուղեկցությամբ մաղթանքներ էին ուղղում նարին, որպեսզի նա անձրև տար դաշտերին: Ծեսի մաս կազմող տիկնիկը ունի տարբեր անուններ՝ Նուրի, Հուրի, Խուճկուրուրիկ և այլն: Նուրին հայտնվում էր Ծաղկազարդի տոնին և երաշտի ժամանակ: Նուրիի աչքերից էին ծնվում շաղը, ցողն ու անձրևի կաթիլները: Երբ մարդն ու անասունը տառապում էին ջրի սակավությունից, Նուրին արտասվում էր և նրա արցունքներից թրջված հողը վերակենդանանում էր, կրկին բերք տալիս: Նուրիի տիկնիկը պատրաստվում էր ցախավելից կամ փայտից: Դեմքը պատրաստում էին սպիտակ լաթից, գոտին՝ գունավոր կտորից, լաչակը՝ փայլփլուն ուլունքներից, իսկ գլխին ամրացնում էր ծաղկեպսակ: Երբ Նուրի տիկնիկին պտտեցնում էին հրապարակներով ու թաղերով, մարդիկ լուսամուտներից ու դռներից կուժերով ջուր էին շաղ տալիս թափորի վրա, իսկ թափորի մասնակիցներին նվերներ ընծայում: Հավաքված բարիքով երիտասարդները կա՛մ խնջույք էին կազմակերպում, կա՛մ էլ դարբնին պատվիրում էին մետաղյա տիկնիկ պատրաստել, որն էլ թողնում էին գյուղի սրբավայրում:

Ծաղկազարդին պարել են Վերվերի պարը: Այդ օրը պարել կաչող էին միայն տղամարդիկ: Ծաղկազարդի հիմնական ուտեստները եղել են կարմիր ներկած ձուն, ձուկը, փլավը, ձվով տապակած բանջարեղենը, վերջում՝ թանձր եփած թանով սպասը կամ կաթով կորկոտաճաշը: Տոնին անպայման ուտում էին նոր դուրս եկած կանաչեղեն: Ծաղկազարդին եփել են եղինջ, որովհետև հավատացել են, որ Քրիստոսին հենց եղինջով են ծեծել:

[8] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010թ., էջ 74

Մանկապարտեզում մեր սաների հետ տոնում ենք հայ ազգային տոներից Ծաղկազարդը։ Պարապմունքը սկսեցինք եղանակային փոփոխությունների մասին զրույցով, երեխաներին բացատրեցինք, որ եկել է տարվա եղանակներից ամենասքանչելին՝ գարունը, իր հետ բերելով սեր, կյանքի զարթոնք, որի նպատակներից է երեխաների հայացքների ուղղումը կենդանի բնություն. հոգալ, խնամել, ջրել շրջապատի բույսերը, ծառերին, չվնասել, չկոտրել և չտրորել։ Երեխաների հետ փորձել ենք պատրաստել Նուրի տիկնիկ։

1.4 Սուրբ Զատիկ

Հայոց տոնածիսական համակարգում պատվավոր տեղ զբաղեցրած տաղավարային այս տոնը հայտնի է Զատիկ կամ Հարություն (լրիվ ձևը Յարութիւն Տեա ռն մերոյ Յիսուսի Քրիստոսի) անվանածներով: «Հարությունը»' Աստծո որդու հետ կատարված իրադարձության ուղղակի արտահայտությունն է: Ինչ վերաբերում է «զա տիկ» բառին, առ այսօր դրա շուրջ գոյություն ունեն տարբեր մեկնաբանություններ: Որոշ ուսումնասիրողներ նմանություն են տեսնում հրեական «Պասեքի» հետ («պասեք» նշանակում է «ելք»): Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ Հին Կտակարանում գործածվող «պասեքը» թարգմանվել է «զատիկ»' «զատնուլ» բառից, որը նշանակում է «բաժանվել» և համանիշն է «ելք» բառի: Ինչպես հրեաները Պասեքի տոնի մեջ հիշատակում են եգիպտական լծից դուրս գալը ելքը, նույնպես և քրիստոնյաները, Հիսուսի չարչարանքների արդյունքով և նրա հարությամբ հիշատակում են մարդկանց սատանայի իշխանությունից փրկվելը և երկնքի արքայությանն արժանի դառնալը: Առանձին հետազոտողներ գտնում են. որ «զատիկ» բառն ունի պարսկական ծագում, բացատրելով որպես' «զոհել» կամ «զենուլ»: Ոմանք համեմատելով հրեակւսն «Պասքայի» հետ. այդ բառի մեջ տեսնում են «զատ» բառի իմաստը. իբր' «զատում» կամ «անցք»: Մ. Օրմանյանն ընդունելով վերոհիշյալ իմաստը, դրա մեջ նաև տեսնում է գարնանային գիշերահավասարին նվիրված և հեթանոսական ժամանակներից մնացած տոնի ակնարկ, որը կատարվել է եղանակների զատվելու ժամանակ: Զուգահեռներ անցկացնելով հրեական Պասքայի հետ, նա ընդունում է այդ բառի հայկական ծագումը: Ղ. Ալիշանը այն նույնացնում է հնդկական Սատրի, եգիպտական Սաղի, վրացական Զադի, ինչպես նաև հունական Զեթես աստվածների հետ,

միաժամանակ նշելով, որ արևելքում նաև գոյություն ուներ Զատիկ անունով «Արդարության աստված»: Այս բոլոր մեկնաբանությունների մեջ առավել հավաստի է զատիկ բառի այն իմաստը, որն առնչվում է բնության զարթոնքի, գարունը ձմեռից զատելու, կամ բաժանելու հետ, ինչպես նաև տարեշրջանի այդ հատվածի հետ սերտորեն կապված կենդանական զոհաբերության հետ: «Զատիկ» բառը հայոց կենցաղում ուներ նաև «տոն» կամ «ուրախություն» իմաստը: Ժողովուրդը դարեր շարունակ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Հարության տաղավարային գլխավոր տոները հաճախ տարբերակել է' Փոքր Զատիկ և Մեծ Զատիկ անվանումներով: Շատ բնակավայրերում «զատիկ» բառն ընկալվում էր որպես «տոն» բառի համանիշ արտահայտություն (օրինակ Ս. Աստվածածնի զատիկ, Ս. Խաչի զատիկ, Վարդավառի զատիկ և այլն)[9]: Զատիկը նշվում է' գարնան գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակի օրը և տոնվում մարտի 22-ից հետո մինչև ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում' շարժվելով 35 օրերի միջև: Զատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում էին շաբաթ և ավարտվում երկուշաբթի օրերին: Շաբաթ երեկոյան ճրագալոյցին կամ ճրագալույսին, եկեղեցում կատարվում էր պատարագ նվիրված Քրիստոսի հարությանը, որով վերջ էր դրվում յոթ շաբաթ տևած Մեծ Պասի շրջանին: Յուրաքանչյուրը մոմ էր վառում և ճաշակում իր հետ վերցրած ձուն, դրանով իսկ, հրաժեշտ տալով պահքին: Պասը լուծելու արարողությունը կոչվում էր «թաթախում», իսկ ժամանակը' «թաթախման գիշեր»: Պատարագի ժամանակ մարդիկ գավիթներում կանգնած' մաղերը պահում էին երեսներին և դրանց միջով նայում արեգակին' հավատալով, որ կտեսնեն հարություն առած Քրիստոսին: Շաբաթ մայրամուտին երդիկից իջեցնում էին Մեծ Պասի յոթ շաբաթները խորհրդանշող և պասը չպահողներին «պատժող» Ակլատիզը վերջին փետուրով: Կիրակի առավոտյան նոր պատարագ էր մատուցվում, որի ընթացքում հավատացյալները սուրբ հաղորդություն էին ստանում: Այդ ժամանակ էլ կատարվում էր զատկական մատաղի հանդիսությունը[10]: Ձուն ամենակարևոր տեղն էր գրավում զատկական տոնում, քանի որ այն անմիջականորեն առնչվում էր տոնի ծիսական գաղափարախոսության հետ: Ձուն այստեղ ամենազանգվածային, ամենասիրված խաղի առարկան էր և

[9] Տոներ, Ս. Մկտտչյան, 2010 թ., էջ 79
[10] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010 թ., էջ 81

նվիրատվության գլխավոր օբյեկտը: Այն մեծամասամբ ներկում էին ավագ շաբաթ օրը կամ կիրակի վաղ առավոտյան, իսկ երբեմն՝ նաև ավագ չորեքշաբթի և ուրբաթ: Հիմնականում ներկում էին կարմիր, ինչպես նաև դեղին, կանաչ, կապույտ և այլ գույներով: Ձուն հաճախ եփում էին պղնձե ամանի մեջ, նախօրոք դրա մեջ դնելով սոխի կլեպներ: Հում ձուն նախշում էին մեղրամոմով, զանազան կանաչեղենի տերևներով կամ թելերով և այդպես եփում: Եփվելու ընթացքում, նախշված տեղերը մնում էին սպիտակ, իսկ ձվի մյուս մասը համապատասխան գույնն էր ստանում: Նշանված երիտասարդները այսպիսի նաշխած ձու էին նվիրում հարսնացուներին: Զանգեզուրում՝ կիրակի լուսաբացին, երիտասարդներն ու երեխաները համբուրում էին Ավետարանը և մեկական ներկած ձու նվիրում քահանային: Վերջինս այդ ձվերից տալիս էր տիրացուին և գյուղի մեծամեծներին, որոնք էլ ճաշակում էին եկեղեցում: Զատկական ձվերը սովորաբար մեծ քանակությամբ էին եփում՝ տոնին հաջորդող օրերին դարձյալ հյուրասիրելու, նվիրելու և ձվախաղեր կազմակերպելու նպատակով: Պատահական չէր ժողովրդի մեջ տարածված այն կարծիքը, թե՝ «զատկական ձուն երկար է դիմանում»: Այսպիսով, ձուն հայոց ավանդական կենցաղում հանդիսացել է գարնան և պտղաբերության խորհրդանիշը: Ձուն հարության խորհրդանիշն էր նաև այլէթնիկ շատ հանրույթների կրոններում, քանի որ իր մեջ պարունակում էր կյանքի նորացման, վերածննդի գաղափարը: Հետևաբար, ձուն, որպես նոր կյանքի խորհրդանիշ, շատ ավելի հին արմատներ ունի և առնչվում է գարնան, բնության զարթոնքն արտացոլող հավատալիքների հետ[11]:

Կենցաղում մեծ տարածում ունեին զատկական ձվախաղերը: Զատկին ձու էին կռվեցնում գրեթե բոլորը, սակայն նրա ամենաակտիվ մասնակիցները երեխաներն էին: Ձուն կռվեցնում էին երկու կողմերով: Նախքան կռվեցնելը, ձվերը ատամներին թեթևակի խփելով, ստուգում էին դրանց ամրությունը: Հաղթող էր համարվում նա, ում ձուն ջարդում էր հակառակորդինը: Կային ձվախաղերի տասնյակ ձևեր: Այդ խաղերից ամենատարածվածը ձակոտրոցին էր, բայց պահպանվել էին նաև՝ ձուգլդորիկը, ձվարշավը, ձուպտտոցին և ձուսեղմոցին: Խաղեր էին կազմակերպում նաև ձուն գլորելու, նշան դնելու, թաքցնելու և այլ ձևերով: Լոռի-Գուգարքում այդ ձվախաղերը կոչվում էին «կրկտանուկի» (կամ՝ «ծվի կրկտի») և «թոլանուկի» (կամ՝ թոլանկի):

[11] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010 թ., էջ 85

Զավախքում, միմյանց Զատիկը շնորհավորելուց հետո, երեխաներն ու երիտասարդները հավաքվում էին տանիքների վրա և ձու կռվեցնում: Զվախաղերը և ձվի հետ կապված սովորույթներն այնքան շատ էին տարածված ու սիրված, որ շատ հաճախ Զատիկը կենցաղում ընկալվում էր որպես ձու ներկելու կամ ձու խաղալու տոն[12]:

Ահա ավանդական բանաստեղծություն նվիրված Զատկի տոնին.

Արևն է ծագեր վէր մեր երդիքին,

Ծագեր է ծագեր լոյս Լուսավորչին,

Զատիկն է բերե լոյս մեր երդիքին,

Հավիկն է արթուն սուրբ Կարապետին,

Կարմիր է հավկիթն մեր սուրբ Զատիկին,

Հավիկն է ածել սուրբ Կարապետին[13]:

Մեծ ոգևորությամբ և խանդավառությամբ ենք մանկապարտեզում նշում Սուրբ Զատկի տոնը: Տոնի նախաշեմին երեխաները պատրաստում են զանազան զարդարանքներ: Նախապատրաստում ենք դատարկ ձվի պատյաններ, որոնք իրենց ձեռքով գեղեցիկ գույներով նկարազարդում են: Այդ գեղեցիկ գունագեղ ձվերով հետո զարդարում ենք դահլիճում դրված ուռենու ճյուղերը: Նախօրոք դաստիարակի օգնությամբ բամբակի վրա ցանում են ցորեն, գարի, որը զատիկի խորհրդանիշներից է: Զատկի օրը դահլիճը համապատասխան ձևավորվում է: Սեղաններին դնում ենք Սուրբ Զատկի տոնին նվիրված ուտելիքներ՝ ներկված ձվեր, չամչով փլավ և այլն:

1.5 Վարդավառ

Վարդավառը' քրիստոնեական տաղավարային այս տոնը, հայտնի է նաև Քրիստոսի Այլակերպություն կամ Պայծառակերպություն անվանմանը: Հայոց եկեղեցական տոնացույցով Վարդավառը նշվում է Զատկի 14- րդ կիրակի օրը կամ' Զատկից 98 օր հետո և ունի 35 օրվա շարժականություն (հունիսի 28-ից մինչև

[12] Տոներ, Ս. Մկրտչյան, 2010 թ., էջ 86
[13] Հայ ժողովրդական տոները, Հրանուշ Խառատյան-Առաքելյան, Երևան, 2005թ., էջ 136

օգոստոսի 1-ը)։ Շատ բնակավայրերում, տեղական ավանդույթի համաձայն, հայերը Վարդավառը նշել են տարբեր ժամկետներում, որը ձգվում էր հուլիսի կեսերից մինչև օգոստոսի սկզբները։ Օրինակ, Տավուշում, Լոռիում և այլուր այդ տոնն առ այսօր նշվում է հուլիսի 20-ին հաջորդող առաջին կիրակի օրը։

Այս տոնը, որն առավել հայտնի էր Վարդավառ անունով, Հայաստանի առանձին բնակավայրերում ուներ անվանման բազում ձևեր, որը հիմնականում պայմանավորված էր հայոց ներէթնիկ խմբերի բարբառային առանձնահատկությամբ, ինչպես նաև տոնի գլխավոր ուխտավայրերի ու առավել տարածված բաղադրիչների գերակա անվանումներով. Վարթևսվառ (Արճակ), Վեսրդևոր (Լոռի, Ջավախք, Հարք-Բուլանըխ,Կաղզվան), Վարդիվոր (Դերսիմ), Վառթիվոր (Զնաբերդ), Վըրթէվօր կամ Վըրթէվուր (Արցախ-Վարանդա), Վարթևոր (Նոր Նախիջևան), Վարթիվոր, ճրճանքի օր (Շաղաթ), ճրճևսն (Մարտիրոս-Վայոց Ձոր), Վրթիվեր (Այգեհովիտ-Տավուշ), Վըրդիվուր (Մեղրի), Վեսրդա վար, Վարդրվուր կամ Վարդիվուր (Մոաալեռ), Վարթիվոր (Ղզլար), Պալլամ, Պարլում կամ Պարլամօն (Քեսապ) և այլն։ Չնայած անվանումների բազմազանությանը, հայոց կենցաղում Վարդավառն ուներ գրեթե համընդհանուր արարողակարգ։ Վարդավառը ծագմամբ հեթանոսական տոն է, որը, ըստ հայագիտության մեջ եղած տեսակետների, կապված էր Աստղիկ և Անահիտ աստվածուհիների պաշտամունքի, Ամանոր-Նավասարդի, ինչպես նաև Համաշխարհային ջրհեղեղի կամ Նոյան տապանի նշանավոր իրադարձության հետ։ Ըստ ավանդության, երբ Նոյ Նահապետը, ջրհեղեղից փրկվելով, հասնում է Մասիսի գագաթը և այնտեղից իջնում Նախիջևան' այդ օրվանից էլ սկսվում է հայոց Նավասարդ կոչվող ամիսը։ Որպեսզի ջրհեղեղի հիշատակը անմոռաց մնար, Նոյը որդիներին պատվիրեց' իրար վրա ջուր լցնել։ ՂևոնդԱլիշանի կարծիքով, վարդավառ բառը դա «վա դդ» արմատից է և կապվում է Աստղիկ դիցուհու պաշտամունքի հետ (հեղինակը գտնում է, որ Վարդավառի ծագումն առնչվում է նաև Նոյան Տապանի կամ Համաշխարհային Ջրհեղեղի ավանդության հետ)։ Ըստ Գ. Ղափանցյանի, վարդավառը խեթերեն բառակազմություն է' կազմված «vadar» (ջուր) և « a rr» (լվանալ' ցնցղել իմաստով) բառերից և նշանակում է ջրի ցնցղում կամ թափում։ Որոշ հեղինակներ վարդավառ բառը սանսկրիտերեն էին համարում' ամբողջությամբ կամ մասնակիորեն։ Ս. Ծոցիկյանի կարծիքով, այդ բառի միայն առաջին մասն է («վա դդ») սանսկրիտերեն

թարգմանաբար նշանակում «ջուր», իսկ մյուս հատվածը («ա վա ր») զուտ հայերեն է՝ «թա փել», «ցա յտ ել» («վայրել» բառարմատից) իմաստով: Ուշագրավ է այդ տոնի ստուգաբանության հետ կապված տեսակետը՝ կապված հունական միջավայրի հետ, ուր այն առավելապես ընկալվում է վարդ-ծաղիկ համատեքստում: Վարդավառի ժողովրդական ծիսահամալիրի կենտրոնում գլխավորը ջուրն էր, ինչպես նաև՝ մատաղը, աղավնին և խնձորը Որոշ ազգագրական շրջանների նյութը վկայում է, որ անցյալում ծիսական համալիրում բավականին մեծ տեղ է հատկացվել վարդին, որը դերը հետագայում նվազել է: Տոնի ժամանակ միմյանց ջրում էին բոլորը, չկային սեռատարիքային որոշակի սահմանափակումներ, հաշվի չէր առնվում մասնակցի ազգակցական կամ սոցիալական կարգավիճակը: Այդ օրը սկեսուրի վրա նույնիսկ չխոսկան հարսն էր համարձակվում ջուր լցնել կամ քավորի վրա՝ սանամայրը և ոչ ոք վիրավորվելու իրավունք չուներ: Ուշագրավ է, որ Վարդավառին ջրցանության ծես էին կատարում նաև հավատափոխ եղած հայերի որոշակի զանգված (օրինակ՝ Դերսիմի քրդացած հայերը)59: Կենցաղում բավական տարածված էր աղավնի թռցնելու սովորույթը, որը կապված է Նոյան տապանի ավանդության հետ: Նախահայր Նոյը հենց աղավնուն էր վստահել համաշխարհային ջրհեղեղից փրկության ավետաբերի առաքելությունը[14]:

Ներկայացնում եմ պարերգ Վանից, որը երեխաների հետ սովորել և կատարում ենք.

Սոնա յար

Սոնա յար, Սոնա յար,

Սոնա սիրուն, Սոնա յար:

Վարդավառը գալիս ա,

Սոնա սիրուն, Սոնա յար:

Ծաղիկը ցնծալիս ա,

[14] Տոներ, Սամվել Մկրտչյան, Երևան, 2010, էջ 98

Սոնա սիրուն, Սոնա յար։

Ա՛յ գյուլում կանչող աղջիկ,

Սոնա յար, Սոնա յար,

Ձենըդ ծլվլալիսա,

Սոնա յար, Սոնա յար։

ԳԼՈՒԽ 2

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դաստիարակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինն ընդգծելու միջոցով, հետևաբար երեխայի դաստիարակությունը պետք է իրականացվի համամարդկային արժեքների հետ շփման միջոցով, որոնք բացահայտվում են ազգային մշակույթին, հերոսական պատմությանը, երգերին, առածներին և այլնին ծանոթանալու ընթացքում: Մշակութը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկային գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով և տեմպով:

Լեզուն միջոց է, որի միջոցով մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, փոխանակում մտքեր և հասնում փոխադարձ ըմբռնման: Երեխան մայրենի լեզվի բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Նախադպրոցական մանկության շրջանում երեխայի ամենակարևոր ձեռքբերումը մայրենի լեզվին տիրապետելն է: Նախադպրոցական հաստատության նպատակն է զարգացնել երեխայի խոսքը: Խոսքի զարգացման ընթացքում զարգանում է երեխայի բանավոր խոսքը: Որպես երեխայի խոսքի հարստացման աղբյուր՝ խոսքի զարգացման մեջ, առանձնահատուկ տեղ ունի գեղարվեստական խոսքը: Խոսքի ուսուցումը անհատի ձևավորման, ազգային մշակույթի յուրացման հիմնական տարրերից է, սերտորեն շաղկապված մտավոր, բարոյական, գեղագիտական դաստիարակության հետ: Չպետք է մոռանալ, որ լեզուն մյուս բոլոր բնագավառներից գիտելիքների հաղորդման և տիրապետման միջոց է: Գեղարվեստական խոսքը հարստացնում է բառապաշարը, զարգացնում է պատկերավոր խոսքը, գեղագիտական ճաշակը:

Հաջորդ կարևոր գործընթացը նախակրթարանումխաղն է: Խաղը երեխայի ամենակարևոր գործունեությունն է. երեխան խաղով է ընկալում ինքն իրեն, աշխարհը և շրջապատը, յուրաքնաչյուր իր երեխան կարող է ներկայացնել խաղով և դերախաղով, ցանկացած գործունեություն վերածել ներկայացման:

Ազգային մշակույթի յուրացումը դրված է նախակրթարանի ծրագրի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ և նոր կազմակերպման ձևերից է: Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական աշխատանքների և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել: Կազմակերպման այս ձևը ստեղծականության և ինքնադրսևորման լայն հնարավորություն է տալիս: Սանը պետք է երգի ազգային երգ, ունկնդրի ազգային երաժշտություն, խաղա ազգային, ծիսական խաղեր: Նախակրթարանում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի: Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի՝

1. ուշադրությունը,
2. հիշողությունը,
3. երևակայությունը,
4. ստեղծագործելու կարողությունը,
5. հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողությունը,
6. շարժողականությունը,
7. ակտիվությունը,

8. վարքի կամածինությունը ընկալումը,
9. շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը,
10. երևույթների մեջ կապ գտնելու կարողությունը,
11. ճիշտ կողմնորոշվելու կարողությունը,
12. շարժումներին տիրապետելու կարողությունը,
13. լսելու կարողությունը,
14. դիտելու և կրկնելու կարողությունը,
15. ինքնատիրապետումը,
16. ինքնուրույն աշխատելու կարողությունը,
17. վերլուծելու, համադրելու կարողությունը,
18. հարստացնում է բառապաշարը:

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զագացման բոլոր ոլորտները, այնպես էլ գոծունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են.

1. իրավիճակների խաղարկում,
2. դերախաղ,
3. խմբային աշխատանք
4. հանդեսներ և տոնակատարություններ:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը: Ծեսի յուրացման, կրթության, ըմբռնման հիմքը անհրաժեշտ է դնել դեռ վաղ տարիքից՝ այսինքն նախակրթարանից: Նախադպրոցական տարիքում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով: Տոնը

մարդուն (լայն առումով) ուղեկցում է իր կյանքի ողջ ընթացքում, և հենց այդ ժամանակահատվածում էլ ձևավորվում, զարգանում և սովորույթի ուժ է ստանում: Շատ կարևոր է ծնողի մասնակցությունը իր երեխայի ծիսական գործունեությանը: Ծեսը ծնողին համեմատաբար հասկանալի իրողությունն է, նրա ակտիվ մասնակցությունը դրան ավելի դյուրին է, քան դպրոցական որևէ այլ արարողության: Նա պատրաստ է մասնակցել ծիսական բոլոր արարողություններին, որովհետև կենցաղում ինքը դրա կարիքն ունի, որովհետև ինքը դա կիրառում է, բայց նյութին չի տիրապետում, որովհետև ծնողի համար ծեսը նաև կապ է իր նախնիների ու անցյալի հետ: Նա սովորում է իր երեխայի սովորած երգերն ու պարերը, նրա հետ եփում է ծիսական կերակուրները:

Երեխայի զարգացմանը նպաստում է զարգացնող միջավայրը, որը երեխայի զարգացման դրդող «առարկայական տարածությունն» է և համարժեք բարոյահոգեբանական մթնոլորտը:

Նյարդային համակարգի ճկունությունն ու ընկալունակությունն առավել արդյունավետ են դարձնում ցանկացած մանկավարժական գործընթաց: Մանկավարժական գործոնների շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչընդոտում է նրա ընդհանուր զարգացման գործընթացը: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձնավորության ձևավորման կարևորագույն գործոն է: Ներկայացված նյութը կարելի է կիրառել ընտանիքում, նախադպրոցական և այլ հաստատություններում: Չէ որ պետք է պահենք ու պահպանենք մեր ազգային մշակույթն ու ավանդույթները:

Ազգային տոների պահպանումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

1. Երեխաները ծանոթանում են ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային,
2. Սովորում են ծիսական երգեր, խաղիկներ և ասիկներ,

3. Երեխաները դաստիարակի միջոցով ստեղծում են ծիսական միջավայր, մասնակից են դառնում ծիսակարգին,
4. Արդյունքում վերականգնում ենք տոնը, ինչը ավելի տպավորվում երեխաների մոտ։

Մի շարք մեթոդներ եմ կիրառել երեխաներին ազգային տոներին ու ծեսերին ծանոթացնելու համար.

1. Խմբային աշխատանք

Թեմայի ուսուցման ընթացքում երեխաներին բաժանել եմ 3-5 հոգանոց խմբերի, յուրաքանչյուր խմբի տվել ենք նկարներով քարտեր (հիմնականում իրենց ծանոթ տոների՝ Ամանոր, Սուրբ Զատիկ, Վարդավառ և այլն)։ Հանձնարարվեց երեխաների ուսումնահիրել նկար-քարտերը և տեղադրել նախապես փակցված պաստառների վրա՝ կատարելով համապատասխանեցուներ՝ տարվա եղանակ-տոնի հերոս-տոնից որևէ մանրամասնություն։ Արդյունքում երեխաները խաղի միջոցով ծանոթացան տոներին և դրանց վերաբերով մի շարք մանրամասների, որոնք լրացվեցին մեր կողմից. երեխաներին ներկայացրեցինք, որ դրանք բոլորը ազգային տոներ են, որոնք ունեն դրանք նշելու նշանակությունը, ժամանակը, կատարման, պահպանման և փոխանցելու կարևորությունը։ Մեր նպատակն է ծանոթացնել ազգային տոներն, դրանց նշանակությանը, ինչպես նաև երեխաների հիշողության մեջ թողնել ազգային տոների անմոռանալի ուրախություն ու ջերմությունը, ավելի լավը, բարի դառնալու ցանկությունը։

Պարապմունքները կրել են շարունակական բնույթ կախված թեմայից,արդյունքում ավագ խմբի երեխաները բավականին շատ պատկերացումներ կազմեցին տոների վերաբերյալ։ Իսկ արդեն հանդեսներն ու տոնակատարությունները համեմված էին ժողովրդական տոնին բնորոշ երգերով, պարերով, խաղիկներով, ասիկներով և այլն, որոնք էլ հնարավորություն են տալիս երեխաներին ավելի մոտ գտնվել մակութային արժեքերին։

Այսպիսով, ազգային տոներն երեխաները իրենց զգում են ժողովրդի մի մասը, սովորում են նրա ավանդույթները, զարգացնում ստեղծագործական կարողությունները։

Ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործում երեխայի զարգացման հետևյալ ասպեկտների վրա՝ զգացմունքային, սոցիալական, լեզվական: Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո ու փաղանքշանքի երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները: Երեխաների զգացմունքների վրա շատ դրական է ազդում այն, երբ նրանք տեղեկանում են, թե ովքեր և երբ են կատարել այդ երգերը: Նրանք ավելի սիրով ու ջերմությամբ են կատարում, ինչի միջոցով էլ արտահայտում են իրենց հրճվանքն ու ուրախությունը: Ծիսական երգն ու երաժտությունը զորեղ միջոց է երեխայի սոցիալական զարգացումը խթանելու համար: Երեխաներին մեծ հաճույք են պատճառում ծիսական այն երգերը, որոնք կազմակերպվում են խմբակային և երկխոսության տեսքով: Ծիսական երգերը իրենց մեջ պարունակում են արարողակարգեր, որոնց միջոցով երեխաները գովում են մեկը մյուսին, նվիրում ծաղիկներ, քաղցրավենիք, ուտելիք և այլն, ինչն էլ երգի և երաժշտության հետ համատեղ էլ ավելի է նպաստում սոցիալական զարգացմանը: Ծիսական երաժշտությունը կարող է զարգացնել երեխայի լեզվական կարողությունները: Մեղեդին հոկում է հիշողությունը ,հետևաբար երեխան հիշելով երգի բառերը, զարգացնում է իր բնական խոսքը: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը: Երեխաաները կարող է ցանկանալ հորինել իրենց սեփական երգերը՝ իմացած կամ ծանոթ մեղեդիների օգտագործմամբ, այդպիսով պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով իրենց անհատական զգացողությունները: Քանի որ ազգային ծեսերից շատերը առնչվում են բնության հետ (օրինակ՝ Ծաղկազարդ, Համբարձում և այլն) հիմնականում պետք է կազմակերպվեն բացօթյա միջավայրում: Ինչն էլ իր հերթին նպաստում է երեխայի աճի և զարգացման համար: Երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այդ թվում՝ խոսքային և մտավորը, նկատելիորեն առաջադիմում են բացօթյա միջավայրի հետ շփվելու ընթացքում: Երեխայի և բնության հետ ստեղծվում է ներդաշնակ կապ:Ինչպես նաև բացօթյա միջավայրը հզոր միջոց է գեղեցիկն ընկալելու:

Երեխաները սիրով են սովորում և երգում ծիսական երգերը: Երգի հետ զուգընթաց նաև խաղում են: Թեմատիկ միջոցառումների կողքին այսօր իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ազգային տոներն ու միջոցառումները՝ Բարեկենդանը, Զատիկը,

Տեառնընդառաջը: Դահլիճը ձեւավորվում է ազգային զարդանախշերով, և նոր շունչ է ստանում ազգային տարազը, որով երեխաները զգեստափոխվում և հոգեպես կապվում են իրենց նախնիների հետ: Այս տոները վերածվում են հանդիսության՝ շնորհիվ գեղեցիկ, ուրախ երգերի:

Այս ամենը զարգացնում է երեխայի մտահորիզոնը, զարգացնում է հիշողությունը, երևակայությունը, խոսքը, որն այնքան կարևոր է այդ տարիքի երեխաների համար, նպաստում է նրանց մտավոր զարգացմանը: Տոնական հանդեսների ու զվարճանքների նախապատրաստումն ու անցկացումը իրագործվում է պլանավորված ու պարբերաբար չխանգարելով մանկապարտեզի ընդհանուր աշխատանքներին: Կազմակերպվող ամեն մի տոնական հանդես ու զվարճանք պետք է ունենա որոշակի նպատակաուղվածություն: Երեխան պետք է զգա ու հասկանա, թե ինչի համար է կազմակերպվում այս կամ այն հանդեսը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտելով համապատասխան գրականությունը, հետազոտական աշխատանքի արդյունքում եկանք հետևյալ եզրահանգումներին. նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ազգային մշակույթի նկատմամբ կայուն հետաքրքրություն ձևավորելու համար անհրաժեշտ է նրանց ծանոթացնել ազգային տոներին, ծեսերին, ավանդույթներին, խաղիկներին, երգ ու պարին: Ազգային տոներն օգնում են սաներին զարգացնել ստեղծագործական կարողությունները: Այս տոները պատկերացում են տալիս ժողովրդական հավատալիքների, ավանդական ծեսերի, հայ գյուղացու առօրյայի մասին:

Պարապմունքները պետք է կազմակերպել այնպես, որ սաները քայլ առ քայլ, համապատասխան միջավայրում արդյունավետ գործունեությամբ, իրենց լիարժեք մասնակցությամբ, ձեռք բերած կարողությունների և հմտությունների միջոցով յուրացնեն յուրաքանչյուր ազգային տոն և ծես: Երեխաների հետ տարվող աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքնչյուր սանի անհատական, հոգեբանական առանձնահատկություններն ու կարիքները:

Հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել են հետևյալ եզրակացություններին՝

1. Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի յուրացումն է, երաժշտական ճաշակի զարգացումը:
2. Ազգային տոների և ծեսերի կրթական գործընթացում կիրառելու ռանձնահատկությունը այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մարդկանց, նրանց մտքերը, զաղափարները, միասնական գործողությունները:
3. Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատ-կություններ, որոնք պահանջում են տեխնոլոգիական, երաժշտական, պատմական, լեզվական լրացուցիչ կրթության լուծումներ:
4. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների զարգացումը բազմակողմանի է, քանի որ ազգային ոգով զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Հայ ժողովրդական տոներ>>, Հ. Խառատյան-Առաքելյան, Երևան 2005 թ.
2. <<Նախադպրոցական մանկավարժություն>> բուհական դասագիրք, Ս. Մարության, Երևան, 2008 թ.
3. <<Տոներ>>, Ս. Մկրտչյան, 2010 թ.
4. <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, Հ. Միտոյան, Երևան, 2020 թ.

Հանդեսներ և Տոնակատարություններ